

ՏԵՐՕՆ

Տարօնոյ աշխատողական դիրքը, բերքերը, ժողովուրդը եւ նոցա պարապմունքը: — Սուրբ Կարապետի վանքը: — Աշտիշատ եւ ժողովրդական ներքին ձգտումն զեզ ի այդ սրբավայրերը: — Ժողովրդական մի բանի սովորութիւններ: — Արածանին, եւ իւր Զրիւթը եւ Ծիծեռն քաղաքի աւերակները:

Հայաստանը պատմական մի աշխարհ է. նորա ամեն մի վայրերը զարգարուած են այնպիսի գեղեցիկ պատկերներով, որոնք տեսնողին զարմացման եւ ապշութեան առիթ են լինում. նորա իւրաքանչիւր գաւառների իւրաքանչիւր խորշերում կանգուն կան անմահ արձաններ, հոյակապ քաղաքների եւ անառիկ բերդերի աւերակներ, եւ այնպիսի հուսկիւնք, որոնք յիշատակումն մեզ գետ եւս մի նախնի թագաւորութեան հզօր եւ ճարկութեամբ պատկերացնող ճշմարտութեան հետքեր. այդ գաւառներից մինն եւս Տարօնն է, այն բարձունքն՝ ուր Մամիկոնեանք սգի առանձն զօրացան, յաղթահարեցին՝ կանգնելով ամուր քաղաքներ եւ բերդեր, թշնամուցն ուժն ու զօրութիւնը իսպառ նուազեցրին, ներկեցին իրենց արեամբ նորա գետերը եւ հայրենեաց ազատութեան հետ կնքեցին իրենց ընթացքը՝ սրճամարհելով գետի թիւնը. Տարօն պատերազմական դուրացիներին լծակից՝ ծնաւ նոյնպէս լուսաւորութեան եւ յառաջադիմութեան հերոսներին, իսկ հայութեան զարգացման այն լուսատու աստղերին, որոց արձակած լուսոյ ճառագայթներովն է միայն՝ որ այսօր հայութիւնն յառաջադիմութեան քայլեր է առնում՝ դրեթէ ազատ մնալով այն անյատակ անդունդը՝ գահալիժուելու վախէն, ուր շատ աղքեր գահալիժեցան:

Մեր պատմութեան մեջ ամենահին ժամանակներից յիշատակուած երկիրներից մին է Տարօն. նորա բնակչութեան սկիզբը Մովսէս Խորենացին այսպէս է յիշատակում. «Եւս նաւերոյ Քոխութիւնոյ ի Հայս եւ զիսկիւր ջամբքի գնայ, ասէ, մի յորդոց նորա կողեցեալն Սիմ ընդ արեւմուտս հիւսիսոյ դիակը զերկիրն, եւ դիպեալ դաշտի միում՝ փոքու առ երկայնաւսալ միով լիւրամբ, գետոց ընդ մեջ նորա անցանելով, ի կողմանս Ասորեստանի դադարէ առ գետովն երկլուսնեայ աւուրս, եւ անուանէ յանուն իւր զԷսան Սիմ, եւ գառնայ անդրէն յարեւելս հարաւոյ ուստի եկն, իսկ ի կրասերագունից որդոցն նորա Տարրան անուն երեսուն ուստիւրք եւ եւ հնգեասան զսակրք եւ նոյնն արամբ մեկնեալ ի հօրէն, բնակէ անդրէն ի նոյն գետեկերին. յորոյ անուն եւ զգաւառն անուանէ Տարօն. ճիշդ այս նկարագրութեան համաձայն ցարդ կան այդ բնակչութեան աւերակներն, որին ժողովուրդը անուանումէ Տ-ըն, Արածանի աջ կողմն:

Տարօնը գրեթէ չորս կողմից սահմանափակուած է բնուերով. հարաւէն դեպի արեւմուտք ձգուում է Տօրասի լեռնաշղթայն իւր ձիւնապատ գագաթներով եւ խառնուում է հիւսիսէն եկած Բննակնեան բազմաբաղաժն ջրմայի հետ. թողլով միմիայն մի նեղ անցք, որ բէր-է է անունւմ, ուստի անցնող ճանապարհը Տարօնին միացնում է Հաշտենից աշխարհի

հետ. իսկ դէպի արեւելք ընդարձակուումէ դաշտը և այնտեղ իսկ սահմանափակուում Հարքայ լեռներով: Տօրոս լեռանց այս ճիւղը, որ անցնումէ Տարօնոյ աշխարհից, մի բարձր բարձրաւանդակ է ներկայացնում 3000- 35000: բարձրութեամբ, բայց կան և այնպիսի բարձր գագաթներ, որոնք գրեթէ ամառնային սաստիկ շոքի ժամանակն իսկ ձիւնապատ են. սոցանից է սուրբ Մարտիկի գագաթը յաւերժակաջ ձիւնով պատուած. լեռների հողը առհասարակ կրտա և աւազուա է: Բայց այնու ամենայնիւ բնութիւնը նորան պարգևած է ամեն ճոխ հարստութիւններ. լեռներն առհասարակ ծածկուած են անտառներով սակաւ բացառութեամբ. անտառները կաղմուած են տերեւախիտ կաղնիներից, բարձրաբերձ բարախներից, կաղամախներից, հացնիւններից ևլն. շատ տեսակ ծառերից, որոնք առատ փայտ են մատակարարում ժողովրդի տնտեսական գործածութեանց, այսինքն չինութեանց, վառելիաց և անասնոց պաշարի ևլն. բայց նոյնպէս գանձուածն և վայրի պտուղների, որոնք դարձեալ մեծ օգուտ են տալի ժողովրդի համար և կաղմում նոցա աշնանային միջոց. շատ անգամ ի վաճառ են հանում դրացի գիւղերում, ինչպէս են քարձին, գառնիճ, ալոճ ևլն: Բացի այս անտառների հարստութիւնից ունի և հանքեր. իսկ 1865-1869 թուականների միջոցներում վանքի աշակերտներից մինը որ Սասուն էր գնացել վարժապետելու, պատմում էր թէ «մի օր աշակերտներով մեկտեղ զբօսելու գնացինք լեռներում, մի տեղ կար լեռան կողքում փոքր տարածութեամբ, որոյ քարերը կարծես սակիից էր ձուլուած. տեսնելով որ անշուշտ դա ոսկւոյ հանք պէտքէ լինի՝ յորգարկով գիւղացիներին ծածկել տալի հաղով. իրեն այդ ասածներին ապացոյց բերած էր մի կտոր քար, որ տեսնողն անշուշտ ձուլուած ոսկւոյ կտոր կկարծէր. կայ և մատանոյ հանք, նոյնպէս հայկաւ և գեղեցիկ քարահանքեր, որոնցից նշանաւոր է Խննակնեան քարահանքը. իսկ Տարօնոյ գաշտը մի բնական պարաէզ է բոլոր բուսական գեղեցկութիւնների, նա մի գրախտի հոփիտ է, ուր գտնուումն ամեն տեսակ բոյսեր. գարունը նորան դարգարումէ կանաչազարդ և հանրածաւալ գորգով. մայիսը գեղեցիկում է զայն ամեն տեսակ զոյններով, իւրեք մի կողմ է վառվում, մանուշակ և ալիւտ միւս կողմն իրենց անուշահոտութիւնը բարբառում, զգեստը զգեստը միւս կողմն աղբիւրների գալարագեղ վայրերը կրակի գոյնով փայլեցնում: Եթէ ասեմ նաև բժշկական մի ծաղկանոց է, չեմ սխալուիր, վասն զի գանուումն և այնպիսի բժշկական ծաղիկներ, որոնք ցաւեր են փարատում, վերքեր են բժշկում աւելի քիչ միջոցում, քան օտար երկրներում: սովորաբար գործածուած գեղերը, օրինակի համար, այստեղ յիշեմ մի քանիսը. Խոտը, զամբոյս է փոքրիկ մեծութեամբ, նորա բաժակը և պտակը վարդի կոկանի է նմանում. բաժակաթերթերը պատումն պտակին. իսկ պտակաթերթերը փոխուած են զեղին թերթիկ և արմատ ունի. երբ պատահի աչքացաւ, որ յաճախ և սովորական է գիւղերում, գնումն և կարում նորա արմատը, և կաթից քիչ գնումն կոպրի վերայ, և ապա մատուցակի լեռներից

իսկ գնեցում աշխարհի վերայ կապումեն և քիչ անցնելուց յետոյ արիւնք
հեղեղի նման է վազում արտերի վերայ, որից և անմիջապէս սկսումէ աշ-
քը լաւանալ: Գարձեալ ինչ-է ինչ, թթու համ ունի, գործածումեն նո-
քայ որոնք ճիճու ունին որովայնում և յաճախ սրանքին խառնումէ:
Ինչ-է ինչ որին Անգղիացի ճանապարհորդք անմահութեան բոյս անուա-
նեցին երևի և ուրիշ բոյսեր, որոց հետ և կապուած կան մի քանի ա-
ռասպելներ, Ժողովուրդն ասումէ թէ՛ մի բոյս կայ՝ որը օձին միայն
յոյանի է և ուտումէ ու իւր խորագետ իմաստութիւնը ստանում: և
թէ կեանքով իսկ նորոգում: որոյ համար իսկ շատ հետամուտ են լի-
նում՝ դայն գտնելու: Կայ գարձեալ մի ուրիշ բոյս, որը ուտելով ասու-
մեն թէ՛ մարդիկ գարձեալ երկարակեաց և իմաստուն կլինին, այդ բոյսը
քաղած ժամանակ սկսումէ գուտանների ձայներ լսուիլ: Մի երիտասարդ
մի օր գնումէ դաշտի և մի կանաչ տեղ նստումէ և սկսում իրեն հա-
մար ձեռքով կանաչ քաղել և փիւ մէջ ժողովել և ապա թափել, այդ
գործողութիւնը կատարած ժամանակ մինչդեռ կանաչը փութն էր՝ յան-
կարճ լսումէ երգի ու պարի ձայներ, և կարծումէ թէ դիւզիցն են լսուում
այդ ձայները: Թափումէ կանաչը և սկսումէ վազել: բայց նոյն բողբոջն
ձայներն արդէն դադարումեն: ոչինչ չհասկանալով այդ դէպքից, դառնու-
մէ և պառաւ մօրը պատմում, որին պատասխան ընդունումէ թէ, այդ
այն բոյսն է եղբի փիւ մէջ՝ որը ուտելով մարդիկ երկարակեաց և իմաս-
տուն են կլինում: Երիտասարդը վերադառնումէ, բայց ոչինչ չի գտնում:
Մէջ-է-մէջ՝ որին ժողովուրդ լռշտակ է ասում, արմաւը մարդոյ դէմքի
նման է, և հանած ժամանակ ասումեն, օստաիկ ձայն է հանում: Այսպէս
ահա այս զրուցութեան իսկ անցողից են Տարօնում՝ պոպոխի բոյսերի
յաճախութեան՝ որից հազարաւորներն ինձ անձանթ են: Բուսական այդ
պերճ ճոխութեան պատճառը նորա արգասանդահող և ջրաւետ լինին է:
Տարօնոյ ամեն մի վայրերն սուգո, ումեն ականակիտ տղբիւրներով, հեղա-
սահ առուակներով, յտակ վտակներով, որոնք թաւալ թաւալ կարկա-
ջելով Իննականեան և Տօրօսեան բարձունքներից՝ իջնումեն դէպի Մեղրի և
Արածանի, որոնք իրեն երկու հարազատ սիրելիք գրկախառնուելով Տա-
րօնոյ դաշտում, պատումեն Տօրօսին ահեղամուտն: Հոտանքով գնող
խառնուիլ Երիտասի հետ և կազմել մի երեքութիւն: Արածանեոյ մէջ՝ աջ
կողմից թափումեն բազմաթիւ վտակներ, որոնցից նշանաւոր է Վե՛լ-
վաակը, որը սկիզբն է առնում բազմաաւր լեռներից, իսկ Մեղրիի մէջ ձախ
կողմից թափումէ Գառնոյ կամ Մշոյ գետը, որը սկիզբն է առնում Տօրօս
լեռներից: Արածանի վերայ Սուլուխ գիւղի մօտ շինուեցաւ մօտ ժամանակ-
ներս մի կամուրջ, որը գիւղի անուամբ ասումէ Սուլուխոյ կամուրջ:
նոյնպէս Մեղրապետի վերայ կայ համանուն կամուրջ: Տարօնոյ ջրոց ա-
ռաստութիւնը կրկնապատկումէ նորա ճոխ արգասաւորութիւնը: հողը ար-
գասանդ է և բերրի, և որովհետեւ տաքութեան կողմից վեցերորդն է Հա-
յաստանի դաշտերի մէջ, հետեւեալ բուսցնում և հասցնում բազմա-

տեսակ արմուխք և պտուղ, առաւելապէս առատ են լինում հիսեհալ արմուխքները, ցորեն, գարի, կորեկ, կառատ, ծխախոտ ևլն. իսկ պտուղներից լինում են խաղող, խնձոր, տանձ, սալոր, դամոն և ուրիշ պտուղներ, զորս չեմ կարող յիշել և ասել մի առ մի բայց չմոռանամ Տարօնոյ Գ—շէն, որը իրեն միայն է յատուկ և արժան է յիշատակի։ Նա իջնումէ գրեթէ մայիսի և յունիսի միջոցներում կազմու տերեւների վերայ ճիշդ մեղրի պէս։ Ժողովուրդը գնումէ բնականիքով կտրում թւափերը, լուսնում են և ստանում են բոլոր, և կամ չորացնում են և հաց են կազմում գազպէի պիտ ալիւրից։ Անդամների կողմից հարուստ է նա դարձեալ, և նորա երկրագործ ժողովուրդը գտնումէ նորա մէջ այն ամեն կենդանիները որոնք հարկաւոր են երկրագործութեան. իսկ հաւերից գտնուում են սագր, բադ, արօս, կարապ, երկու հիւրերը կուռնի և տրազիլ և ուրիշ շատ մանր բրդեցիկ թռչուններ. ձկներից յատուկ կայ Տարօնոյ Կ—շէն և Գ—շէն, Տարօնոյ օդը խիստ զեղեցիկ է և բարեխառն. գարնան ժամանակ մի նախանձիկ պտակիր է ներկայացնում իւր կանաչադարձ գաշտերով տիեզերաց այն զեղեցիկ վայրերի կարգումը որոնք մի յատուկ նշանակութիւն են ունեցել իրենց օդի լուսութեամբը. ամառը տաք է լինում, այնքան որ լուս հասնումէ խաղող, տանձ ևլն. Աշնան ժամանակ տաքութիւնը անցնումէ և ճնայելով ծառերի թուփերի թափուելուն՝ գաշտը նոր ի նորոյ վերակենդանանումէ ծաղիկներով, բայց օգոստոսի վերջերը և սեպտեմբերի մէջ, եթէ ոչ յաճախ գտնէ թիշ բացառութեամբ՝ անձրեւումէ, իսկ ձմեռը ցուրտ է. մինչև 4—6 արշին ձիւն է գալիս և տեւումէ մօտ 6 ամիս մինչև մարտի վերջերը կամ երբեմն ապրիլի կէսը։ Տարօնոյ նշանաւոր տեղերն են. Մշոյ քաղաք, որը շինուած է մի ձորի մէջ ըլրակի վերայ, կռակալանիստ քաղաք է. բնակչաց մեծամասնութիւնը թէև տաճիկ են, այնուամենայնիւ նշանաւոր մասը Հայերն են կազմում. բաժանուումէ 5 թմով. իւրաքանչիւր թմովը ունի իրեն առանձին եկեղեցի և ուսումնարան, — Խոսդիւղ, 500 անից բաղկացած մի գիւղ է, Խօրօնք, Հացիկք, Ցրօնք, Ըռաղ, Ըռինչ, Աշտիշատ, Մեղաի ևլն. որոնք նշանաւոր են իրենց հին պատմական յիշատակներով։ Իսկ Վանքերից նշանաւորներն են Ս. Ասրապետի վանքը, Իմնակնեան լերանց ստորաւում, Ս. Սահակ և Մատնափանք Աշտիշատի մօտ, Ս. Յովհաննու և Ըռաքելոց վանքեր Ցորօսի լեռանց վերայ, որոնք նշանաւոր են իրենց հին լուսաւորչաշէն շինութիւններով։

Տարօնոյ բնակիչների մեծամասնութիւն կազմողն Հայն է, որոց թիւը ճշգիւ չգիտեմ, իսկ քիւրդերը բաց ի մի քանի գիւղերից լեռնաբնակ են. ժողովրդի պարագլուները բացի քաղաքացիներից՝ երկրագործութիւն է և խաշնարածութիւն և մի քանի ուրիշ պարագլուներ. տարին 2 անգամ երկիր են վարում, դարուն և աշուն. ստացած արգիւնքը եղանակների անուամբ ասուումէ Գ—շէն—Լ և Ա—շէն. այդ ստացած արգիւնքնկը ոչ միայն իրենց է բաւականանում այլ և շատ անգամ եթէ խաղող ժամանակ է և անող չլինի՝ շահմարանի մէջ փտումէ. — խաշնարածութիւնը նոյնպէս

գլխաւոր պարապմունքն է: և ամենանշանաւոր մասն է կազմում յոցա կեանքի համար հարկաւոր եղած պայմաններին: Բացի դորանից ցանու մէն բամպակ և ծխախոտ մանաւանդ վերջինս, իսկ կանանց գործն է անային ներքին գործեր: ասա ելապէս պարապումեն ոչխարներէ բուրդը մանկու, ներկելու, գուլպաներ շինելով ծախելու: Նոյնպէս և բամպակ մշակելու, գարնան ժամանակ ծաման փորելու և շինելու: Այս բոլորը անումեն դեռ ձմեռը չեկած, իսկ երբ նա տիրումէ, արդէն բոլոր դործունէութիւնը դադարումէ. այնուհետեւ իւրաքանչիւր գիւղերում մարդիկների գործն է դառնում անասունները պահել և երկկոյեան ժամանակները յատուկ սահմանուած սննեակներով ժողովութիւ և սկսել պատմական և կրօնական հին հին աւանդութիւնների վերայ խօսել, մեկնել, բացատրել պատճառները, լսել երբեմն քահանայի քարոզներին, և հարսանիքներով զբաղուել. աները շինուած են հին ձեւերով, համարեա այն՝ ինչ որ դարերով առաջ պատմած է Քսենոփոնը, բայց ոչ այնչափ գեղեցիկոր, փայտեայ են, կոնաձեւ զիրքով, վերելք երգիք թողնուած: Հագուստը տաճկական ձեւով է. ժողովուրդը սիրումէ շատ պանդուխտ կեանք անցկացնել, յոցա պանդխտութեան գլխաւոր կետերն է, Պոլիս է. չկայ համարեա մի երիտասարդ, որ Պ. Պոլիս տեսած չլինի. ժողովրդի մէջ պահուումեն դեռ ևս շատ հին նահապետական սովորութիւններ, կան այնպիսի տներ՝ որոնք իրենց կազմութեամբ հաւասարում են Յակոր նահապետի գերդաստանին, և հասնում են մինչև 70—75 հոգւոյ, որոց հսկումէ տան ծերունի նահապետը, սովորեցնում յոցա իւր մեծ փորձառութեամբ կեանքի վառագուտը ծանապարհներն, արդելում ամեն վատ հետեանք ունեցող գործերից, և յոցա վերայ փայլեցնել միմիայն զգաստութեան, հեղութեան և լաւ յատկութեան ոգիներ: Իսկ զալով ժողովրդի ներքին պատկերին, նա մի այլ ոգի է ներկայացնում՝ համեմատելով ուրիշ ժողովրդի հետ, իրեն վարքի և բարքի մէջ մի վեհ զգաստութիւն է երևում. նա խիստ հիւրասէր է. իւրաքանչիւր մի գիւղում չկայ մի տուն, որ առաւօտեան կանուխ ելած չվերցնէ հիւրի համար մածնի երեսից սերը, նա զրկումէ իւր մանուկներին՝ որպէս զի հաւատարմաբար կատարէ իւր պարտքը առ պատահական հիւրը, և առ պանդուխտս. կրօնական զգացմունքները յոցա մէջ խիստ զօրացած են, պահքը համարուումէ հաւատոյ մի էական մասն, ով որ պահքը ուտէ, նա այն օր քրիստոնէական պայմաններից դուրս է ելնում, նորա հետ հաց չեն ուտում, նորա խմած ամանով ջուր չեն խմում՝ մինչև միւս առաւօտ. պահք ուտողը ոչ միայն քրիստոնիայ չէ, այլ և ազգութիւն է. նա քիւրդ է, նա բողոքական է, ասումեն, և այս հաստատամտութիւնը պահոց վերաբերութեամբ այնքան զօրաւոր է ներգործիլ ժողովրդի մէջ, որ քիւրդերն անգամ իրենց և Հայոց կրօնի անջատման անջրպետը մի միայն պահքն են համարում, և սորա համար է մի միայն, որ բողոքականները շատ անգամ փայտ են ուտում ժողովրդից և հալածուում անդադար: Ահա այս Տարօնն էր՝ որ Տրդատի ժամանակ տրուեցու

Այլուհեաց ապստամբ նախարարին սպանող Մամիսունին՝ ճեղաց քրքումս էա և սիրամարգաշատ երկրի փոխարէն, ուր յետոյ Մամիկոնեանք զօրանալով՝ զայն սրբացոյցին իրենց սուրբ արեամբ, և ամէն տեղ յիշատակաց արժանի հեղբեր թողուցին: Այս համառօտ տեսութիւնն անկից յետոյ դառնամ զէպի բուն նպատակս՝ Տարօնոյ սրբութեանց սկզբնական սրբավայրերէն սկսելով:

Քրիստոնէութիւնը երբ Աբգարի ժամանակ Թագէոս և Բարդուղիմէոս Առաքելոց քարոզութեամբ պարզեց իւր զրօշը Հայ աշխարհի վերայ, երկար ժամանակ չկարողացաւ տեսչութիւն ունենալ: Անահատայ, Աստղկան և Վահագնի պատգամներն այնքան խոր էին ներգործել Հայ սրտերի վերայ, որ գրեթէ անկարելի էր նոցա դարձնել զէպի ճշմարիտ հաւատք: Այդ հիմանոսական դարու խաւար աշխարհում Իննականեան բարձունքների վրայ իսկ կանգնած կար և մի մհհան՝ Գիսանեայ և Դիմետրիոյ՝ որոնք Հնդկաստանից եկած երկու եղբայրներ էին և Տարօնում ընդունելութիւն գտնելով՝ վերջը աստուածական պատիւ էին ստացել իրենց սերունդէն, և պաշտօնաւթին, որցա մհհանը՝ ամենահարուստ մհհաններից մինն էր համարվում և կանգնած էր այն տեղ՝ ուր կայ պժմ Ս. Յարութեան կաթաղիկէն, և երբ երկրորդ անգամ աւելի պայծառ ծագեցաւ հայութեան մէջ քրիստոնէութեան լոյսը, երբ Պարթևն Դրիպոր իւր հընգիտասանամայ կալանաւորութիւնից յետոյ ելաւ այն մութ և խոր գորբէն տարածելու ճշմարիտ հաւատը և իրեն հետ վերբերելու Հայութիւնը անհաւատութեան գորբէն՝ վերածնելով զայն Յիսուսի Աւետարանի հաւատով, սարսափելի ընդդիմութիւններ գտաւ նա աստ. մհհնական զրօշը գոռող կերպիւ կանգնեցաւ խաչի զրօշին ընդդէմ, և ահեղ սպառնալիքներով որոտաց խաչի փառքը անշքութեան վերածելու, այստեղ Մեդակես քրմապետը վառեց Տարօնեցոց՝ յանուն Վահագնի և Դիմետրիոյ զրգուելով զնոսա խաչին դէմ, սակայն չյաջողեց այդ նորան. ընկնելով նոքա իրենց մհհանների աւերակների վերայ, խաչը յաղթանակեց, դեհըր հալածուեցան, և քրիստոնէութեան զրօշը անցնելով արեան հեղեղներից՝ կանգնեցաւ առաջին անգամ Իննականեան բարձանց վերայ, անդ հիմնուեցաւ եկեղեցեաց անդրանիկն և առաջին անգամ հիշուեցան այն հրեշտակական նուագները, որոնք ապա արձագանք տուին ամբողջ Հայաստանում: Լուսաւորիչն հաստատելով այստեղ քրիստոնէութիւն, կաղմուեմ մի միաբանական ուխտի եղբայրութիւն, զլուխ կարգելով նոցա Ջննոր զկակ՝ Ասորի եպիսկոպոսը, որոյ գերեզմանը ցարգ կայ վանքի պարսպից դէպի հիւսիս մի բլրակի վերայ, խաչքարով հանդերձ, որ շարունակուեմ ոչ թէ հիւանդներ բժշկելու, այլ մի ուրիշ հրաշք զեռ ևս գործում է. վանքի միաբանութեան մէջ պահուած սոփորութեան համաձայն, երբ երկինքը չէ ցօղում և երաշտ է սկսում, միաբանութիւնն եկեղեցական հանդիսիւ ջուր առած՝ գնում է լուալու նորա տապանաբարբ որպէս զի անձրև գայ: Ս. Լուսաւորիչ՝ Իննականեան վանուց միաբանու-

Թիւեր կարգադրելէ ետքն իջնումք Աշտիշատ, այնտեղ իսկ կործանում մեհմանները՝ սրբում Տարօնը կռապաշտական կրօնքից և սովորութիւններից, քրիստոնէութեան այս փառաւոր յաղթանակի յիշատակներն անմոռաց և անկորուստ պահպանումք ցարդ ժողովուրդը իւր զրոյցներում, պատմում են, որ երբ Առևտարիչը զեկրին հալածեց՝ կաղ զեն իբրև այդ զնդի մեծ սագայել, ելնումք լուսաւորչի առջև, երկրպագումք և ոգւով այդ վայրերի հետ կապուած լինելով, խնդրումք ասելով, «սուրբ Առևտարիչ, ես քեզ զուրբան, մի հաներ զիս էս տէհան, կեղնիմ քեզ փոշեհան, քո փոշինը կթափեմ Փրէ պատման», այս Փրէպատմանը մի տեղ է, որ ժողովրդի ասածի համաձայն գտնուումք ձեռքս քոտան, զաւանակ, աւերակ մի տեղ է, ամեն օր փչումեն նորա պարիսպները, քարը քարի վերայ մնալ չէ կարող, և իբրև թէ լուսաւորիչը զիջած նորա խնդրքին՝ թողլ է տուած, Առևտարներն հետեւելով այդ զրոյցներին՝ մինչև ցարդ իսկ մեծ վախով մտնումեն վանքի փուռը և զարմանքով նայումեն հացարարների սրբած յատակի վերայ, որ փոշոյ հետք անգամ չտեսնելով ապշումեն, Նոյնպէս Ս. Թարութեան կաթուղիկէին, որ ցարդ կենումք իբրև պատկեր Նոյն ժամանակի ճարտարագործութեան, զիստ են ասում, իբրև թէ այն տեղ է եղեր զեկրի ժողովուրդը, որոց հալածեց Առևտարիչը, Այս պատմութիւնը միայն Տարօնեցիք չեն պատմում, այլ ուրիշ գաւառացիք ևս, մինչև անգամ նոր Նախիջևանցիները պահպանած են այդ զրոյցը, 1878 թուականում՝ նոր Նախիջևանից եկած ուստարներից մի բարեպաշտ անձն էլ Եւթի պատմութիւնը մտքի մէջ պահած լինելով՝ իբրև աւելի հետաքրքիր, մի անգամ վանքի միաբաններից մէկի հետ խոսած ժամանակ հարցնումք թէ՝ արդեօք կարճը եմ տեսնել նորան, Նոյն իսկ այդ բոլորին ըստ զիս զիս ընկել վաթսմամեայ ծերունի Անտօնը, որ սաստիկ կաղում էր մի ոտքից, գալիս էր դէպի վանքը, որովհետև իբրև հաշմանգամ անգամ, վանքի հացովն էր կերակրում իւր տունը, երբ ծերունին ընկնումք շարածձի վարդապետի աչքի առջև՝ առանց ժամանակ կորցնելու յառաջանումք լեցնելու բարեպաշտ Նախիջևանցոյ հետաքրքրութիւնը մատով ցոյց տալով թէ «ահա կաղ զեւ», խեղճ ուստարը սարսափած և զեղնած երեք անգամ երեսը խաչակնքումք, սակայն զև համարուած ծերունին առանց աներևութանալու դէպի վանքն է գալիս, յետոյ հարցնումք թէ, արդեօք հաւատով իսկ չհանեցի՞, որ չաներևութացաւ, ոչ, պատասխանումք վարդապետը կիսաթալիտ դէմքով, այլ նորա համար՝ որ Առևտարիչի հրամանաւ դա պիտի կենայ մինչև աշխարհիս կատարածը Ս. Արապետի փոշին Փրէ պատման տանել թափելու, այսպիսեաւ ժողովուրդը մեհմանական պաշտամունքը կարծես ծառայեցնելով Աւետարանական պաշտման, Ս. Արապետին է վերաբերում այն ամեն բանը, ինչ որ Ահագնից և Անահտից ընդունել կմտաբերէին, նորան ընդունումեն իբրև նշանաւոր հրաշագործ, նա բժշկումք դիւահարներին և ուրիշ ցաւագարներին, որոնք հաւատով նորան մօտենումեն, նորա կատա-

մած բժշկութիւնները բազմաթիւ են, երբ անցեալ ժամանակներում բար-
բարոս Գիւրգիւրը միաբանեցան և եկան վանքը կողոպտելու, նոցանից մինը
հրացանով խփումէ կաթուղիկէի խաչը վայր բերելու զիտաւորութեամբ
սակայն նա այլ ևս արեւ չէ տեսնում, և նոյն տեղը մեռած է մնում. սո-
րանով քիւրդերը կատաղելով՝ յարձակուում են վանքի վերայ, սակայն
իրենց ջանքն ի զուր է ելնում. եռազլիսեան մի վիշապ ահաւոր կիրպա-
րանքով նոցա զիմացն է ելնում, և վանքը բոլորովին տալաւ է մնում.
Այս և այսպիսի բազմաթիւ հրաշքներ են պատմում, ընդունում են նո-
րան դարձեալ իբրեւ արագահաս օգնական հեծած ճերմակ ձիու վերայ, և
շնորհատու. նորան են վերաբերում լարախաղութեան շնորհքը, ուժ տալը
ելն. սոցա երազներով է յայտնվում և պարգևում. Խաս զիւղցի Մա-
նուկը՝ որ ահագին ուժ ունի՝ մինչև անգամ 2—3 ձիու նույլ կամ 2 սամա-
խու մեկէն է կոտորում գրեթէ ամեն վարդապետին բազմութեան առջև,
այսպէս է պատմում իւր ուժ ստանալն՝ եթէ մինը նորան հարցնէ. «Աւր-
դելիին ուխտ էի եկել, քնիս մէջ մէկլէ ինչ տեսնամ, մէկ օտէ (սենեակ)
մը բացուաւ առջևս, մտայ էն տեղ տեսայ օր՝ էտ օտի մէկ դին կուժ մը
արդւն, մէկէնի կուժմը թարախ կէր, ու էտոնց մէջ լէ մէկ մարդ, ինձիկ
օր տեսաւ՝ ելաւ, առաւ զգութնի զոնձիլ, և բերեց կապեց զիմ՝ ոտներ ու
մէջ իմ ափին լցուց մէկ բուռ կորէկ ու ցորէն, որ իրար էր խառնուկ, ու
լսաւ ընձի. «դէ՛ զէտոնք ջոկէ», ես լէ ջոկեցի ու հպամ զձեռքերս լէ կա-
պեց ու ըսեց. «Թոթվէ», ես լէ որ թոթվեցի, զոնձիլնի հաղար փշոր եղաւ,
ես լէ ձենիցը խրտայ, որ երազ էր, ու էն օրից էտ խուվաթ եկաւ
իմ վրէն»։ — Անտարակոյս է այս, որ անշուշտ ժողովուրդը պիտի յա-
ճախէ այն սրբաբայրը, որոյ հետ կապուած է այսպիսի պայմաններով,
հինգ տաղաւարին ևս ամեն կողմից խուռնեբամ զիմումն անդ, կատա-
րում իրենց ուխտը և վերադառնում. այդ ժամանակուայ նոցա կեանքը
անկարելի է նկարագրել, ամենքը զարդարուած հարսանեկան հանդերձնե-
րով, պարուսնի, երգում, ուրախութեան և ցնծութեան ձայներով օղբ
թնդացնում, մի կողմ ձիարշաւ, միւսը լարախաղ, մի ուրիշ տեղ 7 տա-
րի ծոմ պահող աշններ հին գողթան վիպասանաց նման իրենց բամբիւ-
ները ձեռքերնին առած՝ ասպարէզ են ելնում, երկինքն ու երկիր մենա-
մարտութեան հանդիսի են բերում, հակառակ զիմառնութիւններով խօ-
սում, և երբ մէկն յաղթէ՝ դառնումէ փառքով իբրեւ Աղիմպիական
խաղերէ դարձող մի զիւցաղն, դափնիներ ընդունելու, նորա քնարի թե-
լերը ամեն տեղ հնչում են Ս. Արապետի անունը. իսկ ի՞նչ է այն յաղ-
թողի վիճակը, ո՞հ յուսահատութիւնից կրակ դարձած, փշուռմէ իւր
քնարը և դառնում կրկին 7 տարի ևս պահը պահելու, և նոր քնարով
նոր ասպարէզ ելնելու. ահա այսպիսի գեղեցիկ հանդեսներից յետոյ շա-
բաթ օրերում ամեն տաղաւարներին մատաղ են անում, և այդ օրն
արդէն ուրախութիւնների վերջին օրն է. թափում են բոլոր ճիւղերը, ամենի
երակների մէջ կենդանական արիւն է բորբոքուում, և աշխատում են որ-

չափ կարելի է, մի վայրկեան չթողնել կորսուելու. իսկ երբ ծագումէ միաշարաթի առաւօտն, ամենքը զգաստացած ջերմեռանդութեամբ գնումեն գերեզմանն համբուրելու, իսկ կանանց դասը պարկեշտ զգաստութեամբ և արտասուածօր աչքով կանգնած գերեզմանի դուռն՝ առանց ներս մտնելու համարձակութեան՝ (որ մի աւանդութիւնից է յառաջացած), խընդրում են աշխարհի խաղաղութիւնը իրենց որդւոց ազատութիւն և վերադառնում: Սակայն այս տեղ ևս չի վերջանում ժողովական զրոյցներն այս սրբափայրի մասին, և որովհետեւ ժամանակի սղութիւնը չի թոյլադրում ինձ բոլորը շարունակել, այսչափը բաւական թող լինի և դառնանք յԱշտիշատ:

Մի և նոյն զգացմունքներով ժողովուրդն կապուած է և Աշտիշատի հետ: Քրիստոնէութիւնից յառաջ՝ ինչպէս յայտնի է՝ Աշտիշատն իսկ մեհնարական զխաւոր մի վայր էր և քրմական կալուած. այնտեղ կանգնած կային 3 արձաններ Զէւոնի, Բելի և Գեղեցիկի իբրեւ ճշմարիտ յատկանիշներ Տարօնոյ վարուց և բարուց. Անահիտն իբրեւ մայր ամենայն զգաստութեան պաշտուում էր «Անահիտ» ասուած մեհնում. նորա Դիցական փառացի ոսկեպատկերը պսակուում էր այստեղ վառ փռ վարդենիներով և շուշաններով իբրեւ նշան անմեղութեան. — «Վահագնի» «Վահագնի» «Վահագնի» պաշտուում էր Վահագնի յիշատակը, Տիգրանայ այն խարտեաշ և վիշապաբաղ որդւոյն, որոյ նիզակի ահագին լաստէն սարսափեցան օձեր և վիշապներ և փախչելով ծակամուտ եղան, իսկ «Վահագնի» «Վահագնի» «Վահագնի» Աստղիկը, վերածնող ամեն միտքերի մէջ գեղեցկութեան պատկերն ու ճաշակը, Քրիստոնէութիւնից յետոյ ճշմարիտ հաւատոյ դաշոյնը չկրցաւ իսպառ ջնջել ժողովրդեան մօքէն հեթանոսական կրօնի այդ խաւոր հետքերը, ժողովուրդն խարխալելով գրեթէ գնում էր այդ երկու ճանապարհները, մինչև որ հինգերորդ դարում շիջաւ հայութեան պայծառ արեգակը (Ս. Սահակ), և թաղուեցաւ Տարօնում. այնուհետեւ շուշացաւ նա ընտրել զայն իրեն դիւցազն, իւր ամեն կապիւր սերտ կերպիւ միացրեց նորա հետ, և սկսեց պաշտել նորան, այնքան գերազանց Անահայ և Վահագնի պաշտօնէն, որքան գերազանց է եկեղեցին՝ մեհնէն և խաչը՝ անդրիներէն, Ժողովրդական հայեացքները զեպի Սահակ Պարթևը վառ են և աշխոյժ, և նորա յիշատակը անջնջելի իրենց մօքում. նորան են վերաբերում Էրֆր + Էր ասուած հիւանդութեան բժշկութիւնը. երբ մի որ և է որ բըռնուի այդ հիւանդութեամբ, այնուհետեւ նորա միտքը սկսումէ շրջել Ս. Սահակայ գերեզմանին շուրջը, մինչև որ տեսնի մի երազ, և հետևի նորան. ժողովուրդը նորան երազների մէջ ներկայացնումէ մի ձերուհի, հագած սպիտակ, բայց զէմքը դժգոյն, նկարագրիկ կամենալով կարծես նորա վերջին վիշտերը, ինչոր կրեց վառ նախարարներից, հրաւիրումէ հիւանդին հաւատով իրեն գերեզմանի վերայ բժշկութիւն պարգևելու փոխարէնը միայն մի զոյգ մօմ՝ պահանջելով, Մեծ պահոց Աւագ Հինգշաբթին կամ Աշխարհամատրան կիրակէին ժողովուրդը գնումէ ուխտի հա-

ւատով և սրբութեամբ Հայրապետի գերեզմանը համբուրելու և իւր ցա-
ւոց բժշկութիւն գտնելու որ խիստ հաւատարմաւ պատմութեամբ ժողովրդի
մէջ հարցուր իւրաքանչիւր ռքի և նա կպատմէ քեզ թէ՛ մի դիւահար տե-
սայ, որ գերեզմանի վերայ եկած ժամանակ քթի ծակերէն սկսեց հոսել
արիւն, կարկամիլ, գլխի վերայ կանգնիլ և ազատուիլ, միւսը մի ուրիշ
հրաշք, երրորդը՝ մի ուրիշ զարմանք, որ եթէ լսես մինչև երեկոյ վերջ
չկայ, Աշտիշատի տեղ կայ այժմ մի գիւղ Տէրէ՛ անունով. բնակիչքը
խիստ քաջ են, ասպարախաղութեան մէջ խիստ յառաջացած, երբ հանդէս
են ելնում՝ զարմացնում են մարդուն, այդ գիւղի շուրջը մեծ տարածու-
թեամբ բուսնումեն վայրերի վարդեր, թերևս իբրև Անահտայ նուիրական
վարդերի պատուաւոր արմատի նոր ընձիւղներ. ասումեն թէ՛ այժմ սուրբ
Սահակայ մատուռի մօտ վանքի հին աւերակների վերայ շինութիւններ են
շինել և բնակումեն, Գեռ չանցած Արածանեոյ ափերի վրայ գտնուող
աւերակների մօտ՝ յիշեմ՝ և մի բան, Տարօնում քիչ են գտնուում
այնպիսի գիւղեր, որոնք չունենան իրենց Բ--Ի Բ--Ի--Ի--Ի. այսպէս են ա-
նունւում նոքա առանձին այն անձերին՝ որոնք իբրև սուրբ ճանաչելու՝
մատուռներում բնակում են իրենց մէջ իբրև մասնաւոր վերադիտողներ.
նոքա հաւատում են որ դա հսկող է գիւղին, վարձատրում են բարիներին
շնորհներով, իսկ ընդհակառակն պատժում չարերին, որոնք բնութեան
հակառակ մի բան են անում. նոքա սաստիկ պատուախնդիր են. այն անձը
որ անցնումէ իրենց մատուռի մօտից, և խաչ հանելով չի համբուրում ի-
րենց որմի քարերը, նոքա երևումեն նոցա սպառնացայտ դէմքով ձեռքու-
մը բռնած Ի--Ի Ի--Ի, որ նշան է թողութեան, և պատուիրում զգուշա-
նալ. իսկ եթէ երկրորդ անգամ անտարբեր գտնուի, նոյն անձն երևումէ
կրկին աւելի ահաղ, ձեռքի կանանչ Մականը ալ է փոխած, հարուածումէ զայն,
և արդէն այդ հարուածը կամ մահացու է, կամ պատճառ մեծ ձախորդու-
թեան, ջերմ կամ այլ հիւանդութիւն ունեցողները շաբաթ երեկոյաններն
զախիս են և թուխ մանուկների գերեզմանների շուրջ 7 անգամ շրջում են,
ապա 3 բաժակ ջուր գլխին լեցնելով հիւանդը խոնարհումէ 3 անգամ լե-
զուն թաթաւել ջրի մէջ, և ապա հանդերձի մի մասը կապումեն առաս-
տաղից ասելով «ըմեն ցաւ ու չոռ մնայ էստեղ» ու վերադառնումեն. —
Ահա զարձեալ շատ բժշկութեան աղբիւրներ՝ որոնք ցաւեր են առողջաց-
նում, Հին հեթանոսական սովորութիւններով Տարօնոյ աշխարհը լի է
բազմ փորձել, թիղ չափել, ըզունկ նայել և ըն. իսկ մասնաւոր
գիւղերում գտնուում են և այնպիսի կանայք, որոնք Զորեքչարթի և Ա. ր-
բաթ երեկոյանները, որոնց հետ կապուած են հին սովորութիւններով,
սուրբ պահելով ինչպէս Շաբաթ երեկոյ իբրև Ի--Ի Ի--Ի, և դադարելով
բոլոր գործերից, տեսիլքի են գնում, այնտեղ տեսնումեն մարդոց, վիճակնե-
րը կամ լաւ կամ վատ, երբ ուզէ ասել թէ յաջողեն գնում նորա գործերն,
որոյ մասին առաջարկուած է իրեն իմանալ այդ տեսիլքի մէջ, նա նկա-
րագրում է մի ծաղկալից դաշտ չորս կողմը աղբիւրներով և առուակներով

լիս դորա մէջ մի ձանապարհ, որից անցնումէ անմիջապէս կերպիւ իսկ երբ կամենայ ասել՝ թէ մահ կայ նորան դարանակալ, նա նկարագրումէ մի աւերակ, փլած և խարխալուն, որոյ մէջից անցնումէ արեան թուխ կէտէ մի կողմ՝ մի գերեզման փորուած և նա կէս մարմնով թաղուած անդ, որ նշան է նորա մահուան կամ ձախորդութիւնների, ժամանակի անձկութիւնը շնորհելով այլևս խօսքս երկարաձգել այսպիսի բաների վերայ՝ անցնեմ փոքր ինչ տեսութիւն անել Արածանիի և նորա մօտ գտնուող աւերակների մասին գտնուած զրոյցներին և այդու կնիք տալ խօսքիս:

Արածանին բղխելով Բագրևանդայ Ծաղկիոյ լեռան ստորոտից և իւր մանուածապտոյտ հանդարտ հոսանքով իջնելով Տարօնոյ դաշտը պատումէ Տօրօսին մի ահեղ մոնշլեներով գնալ անցնել միւս կողմ, այդ տեղ մի սարսափելի ահաւելի կերպարանք է պատկերացնում մարդու աչքին, գետի երկու կողմը ահագին քարաժայռներ են բարձրանում, որոց մէջ գետը խոխոջելով թափումէ ներքե՝ կաղմելով մի ջրվեժ արդարև խիստ գեղեցիկ՝ դիրքը սաստիկ անառիկ է, այս այն տեղն է՝ ուր Տիրան Մամիկոնեան իւր 8000 քաջերով կանգնեցաւ Հագարացի 18000 խուռն հրոսակի դէմ, որոնք անարգել յառաջած էին մինչև անդ, և պիտի ջնջէր այնօր՝ նոցա եթէ Սահակ Անձեացին իւր անհաւատարմութեամբ չդաւաճանէր Տիրանին, գետի ձախ կողմը կանգնած կան մի հսկայ բերդի աւերակներ, ժողովուրդը պատմում է թէ՛ դա գայլ Աահանի բերդի աւերակներն են, և ահա ինչպէս է պատմում նա իւր պատմութիւնը, եթէ մինը չտեսած հարցնէ նորան, «էն վախտն որ Պարսիկներ զօրեղցան ու եկան մըր աշխար զմզի թալնելու ու հետիւր տանելու կէր մէկ Գայլ Աահան անունով մարդ, որ շատ կտրիճ էր, եւսր տեսաւ որ պարսիկներն շատ նեղու թիւն կիտեն ժողովրդին, նա եկաւ ու էս Պարսկուռայ սարի գլխին զէտ անասիկ բերդ շինեց ու գետին վրին էլ կարմունջ շինեց զնձիւներով, ու էտ բերդի մէջ պահեց զուր աստու, եւսր պարսիկներնի կզօրեղնային Գայլ Աահանի վրէն, ինքն զժնձիւներնի կքակէր որ պարսիկներնի շընցնան ուր բերդ, եւսր ինքն կզօրեղներ զզնձիւներնի կթալէր գետի վրէն ու կընցնէր էն դին, հմկայ լէ կայ ուր կարմնջի օգերը որ մէկ մաղի չափ է, ճիշդ է, այդ բերդի հսկայ շինութեան աւերակները կենում են ցարդ կենում նոյնպէս և այդ քարերի մէջ մտնած ահագին երկաթները որ տեսնողին զարմանք են պատճառում, ժողովուրդը Արածանին կամ այդ տեղը իսկապէս ընդունումէ իբրև գուշակ անձրևաբերի, նոքա պատմում են որ՝ պարզ օրում երբ պէտքէ անձրև գայ՝ նա ահագին ձայն է բարձրացնում, որից և այդ տեղը կոչուումէ «էնդուր համար կրսեն կուրկուռայ չումքի ձէն կիտայ ուր ձէն իրեք սհաթվայ ճամբայ կերթայ, ու էտ տեղաց բոլորն էլ գիտեն որ շատ անձրև պտի գայ», Այս բերդի արևմտահիւսիսային կողմում կայ Ծիծեռն քաղաքի աւերակները, որոյ շինութիւնները երևում են, քաղաքի հիւսիսային կողմ գտնուումէ գեղեցիկ տապանաքարերով գերեզմաններ՝ ուր տարին մի անգամ վաճառի միաբանու-

Թիւեր գալիս է՝ օրհնելու և վերադառնալու, իսկ գէպ ի հարաւ կայ մի ջուր սրժողովրդի ասածին համաձայն սաստիկ խոր է՝ պարսիկների քաղաքի կործանման ժամանակ բնակիչքը իրենց ստացուածքը հաւաքելով այնտեղ են լիցրած և մինչև ցայժմ կենումէ՝ ասումեն շատ անգամ հիւրեր են երևում հոգիւններին և պահանջում են իրենց զոհ մի զոյգ ոչխար սպիտակ և սեաւ, որպէս զի բանան այդ խոր ջրի գուռը՝ բայց հովիւները վախենալով ցարդ՝ ոչ ոք չէ փորձած այդ փորձն անել, այժմ այդ աւերակներին Զիվշեռ են ասում և եթէ շրջողներնք դա Ծիծեռն անուան աղճատումը արդէն անունն իսկ ստուգումէ զայդ իբրեւ ճշմարտութիւն, որովհետեւ Զիւշէ իբրեւ քիւրդերէն բառեր թարգմանուումէ արծաթ-սկի և նոքա այդ հայ քաղաքին մօտիկ լինելով և ծանօթ անշուշտ հայ ասացուածներին՝ այդպէս են անուանել. բայց կանգ առնում, իմ գրչիս դեռ թողաւորուած չէ Տարօնդ բաղմաթիւ աւերակներին, սովորութիւններին, ժողովրդական զգացմանց գէպ ի իւր կրօնը և ինչ մասերի վերայ խօսել. մանաւանդ որ շատ տեղեկութիւն իսկ չունիմ, և սրանով ևս բաւականանալով՝ առ այժմս կնքում եմ խօսքս:

ԳԵՐԳ. ՃԷՖ. Դ. ԴԱՍ. ԱԼԱԿ.

Կ. ՄԿՐՏՁԵԱՆ, ՄՇԵՅԻ.

Ըյս յօդուածը ևս կարդացուած է Մայր Աթոռոյս Գէորգեան Ճեմարանի աշակերտաց զբաղանական ժողովում,

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մայր Աթոռոյս Գէորգեան Ճեմարանի սանուները ներկայ տարւոյս Զատիկի օրը շնորհ ունեցան Աղգիւս Սրբազնատուրը Հայրապետին ներկայանալ հետեւեալ ուղերձով:

ՈՒՂԵՐՁ

Ի ՅԵՇԱՏԱԿԻ ՅԱՐՈՒԹԵԱՆՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ,

ՆՈՐԻՆ ՎԵՃԱՓԱՌՈՒԹԵԱՆ

ԿԸԹՈՒՂԻՊՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՐԳԵՍ Դ.

ՎԵՃԱՓԱՌ ՏԷՐ,

Ըյս գերահարաչ սփռի այսօր բովանդակ արարածոց, և խաւար թանձրամած՝ յոր բանականն խարխափէր՝ հալածական ծածկի յաջաց յաներևոյթու Զի յարեաւ Տէր, և լոյս ծագեաց արեղերաց՝ կանգնեալ յաղթանակ գերիվերոյ ամենեցուն իշխանութեանց և պետութեանց, Յարեաւ Տէր,